ԸԴԻՄԱԽՈՍԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ

ՆԱՐԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԿԱՐԱԽԱՆՅԱՆԻ՝ «ԱՐԴԻ ՀԱՅ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՎԵՊԸ 1990-2015 ԹԹ.» ԹԵՄԱՅՈՎ Ժ 01.02 («ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ») ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նարինե Կարախանյանի «Արդի հայ կենսագրական վեպը» ատենախոսության թեման ինքնին արդիական է, քանի որ մանավանդ վերջին տասնամյակների չորրորդ արդյունաբերական հեղափոխության պարտադրանքները վերադասավորումների են ենթարկում մարդկային ոչ միայն աշխարհընկալումներն ու աշխարհզգացողությունը, այլև նախասիրությունները դեպի այս կամ այն գրական ժանրը՝ երբեմն փոփոխելով գեղարվեստի հանդեպ մոտեցումներն ու պահանջները:

«Ներածություն» բաժնում բավարար չափով ներկայացված են թեկնածուական աշխատանքի նպատակն ու խնդիրները, մեթոդաբանությունը, կառուցվածքն ու բովանդակությունը. հատկապես հաջողված ու ամփոփ է «Թեմայի արդիականությունն ու գործնական նշանակությունը» ենթաբաժինը: Ինչպես որ հայցորդն ինքն է գրում, թե՝ «Կենսագրավեպերի հիմնական նպատակադրույթը իրենց հերոսների հռչակումն է, նրանց հանրայնացումը և ճանաչումը» (էջ 25), այնպես էլ իր աշխատանքն է ճանաչելի դարձնում կենսագրավեպի առանձնահատկությունները, հանրայնացնում՝ երբեմն հանիրավի անուշադրության մատնված 20-21-րդ դարագլխի հայ կենսավեպերը:

Ատենախոսության առաջին գլխում, որ վերնագրված է «Պատմության և տեսության հարցեր», Նարինե Կարախանյանը հանգամանորեն և սպառիչ անդրադառնում է կենսագրական վեպի ժանրային առանձնահատկություններին: Հայցորդը միանգամայն հստակ է պատկերացնում և ներկայացնում ժանրի

տիպաբանությունը, նա գրում է. «Կենսագրավեպը փաստավավերագրական նյութի հենքով գեղարվեստական ստեղծագործություն է: Այն նշանավոր մարդկանց մասին ստեղծված կենսագրության կամ կենսագրական ժանրի շարունակությունն է» (էջ 21): Ապա հավելում է. «Մենք կարծում ենք, որ կենսագրավեպը վեպի ժանրին պատկանող առանձին, ինքնուրույն ենթատեսակ կամ ենթաժանր է» (էջ 39): Ն. Կարախանյանն անթերի կարողացել է հիմնավորել կենսագրական վեպի ոչ միայն տեղն ու նշանակությունը, այլև գրեթե մաթեմատիկական սխեմայի ճշգրտության է հասցրել այդ ենթաժանրի էատարրերը, սկզբնաղբյուրների և գեղարվեստական երևակայության չափաբաժինների հարաբերակցության նրբությունները: Այդ համակարգվածությունը ոչ միայն հայցորդի՝ մինչ իրեն եղած գրականագիտական նյութին քաջածանոթությունից է, այլև օրինաչափությունները տեսնելու, դրանք ապացուցողական համակարգով հիմնավորելու կարողությունից:

Հայցորդը մանրամասն պատկերացնում և ներկայացնում է իր քննած ժանրի առանձնահատկություններն ու նրբությունները, սակայն ցանկալի կլիներ, որ ոչ մի դեպքում կիսատ թողնված միտք չմնար, ինչպես օրինակ՝ խոսելով գրականագետ Սևակ Արզումանյանի՝ պատմավեպի և պատմակենսագրական վեպի մոտեցման մասին, հայցորդը գրում է. «Մեր կարծիքով՝ գրականագետի նման զուգահեռը սահմանափակում է կենսագրական վեպի առանձնահատկություններն ու քննադատության դրսևորման հնարավորությունները» (էջ 33): Հավանաբար, այս պնդումը հենց տեղում հիմնավորման կարիք ունի, թե որո՞նք են հայցորդի կողմից նկատված այդ սահմանափակումները, մանավանդ որ այլ հատվածներում նա դրանք հստակ ներկայացնում է ու հիմնավորում:

«Գեղարվեստականի և վավերականի համադրության տիրույթներում» վերնագրված երկրորդ գլխում հայցորդն առանձին ենթավերնագրերով հետազոտում է Գրիգոր Զոհրապին նվիրված Պերճ Զեյթունցյանի «Վերջին արևագալը» կենսագրական վեպը, քննում Ռուբեն Սևակին նվիրված Անդրանիկ Ծառուկյանի

«Սէրը եղեռնին մէջ» և Հայկազ Հակոբջանյանի «Սպիտակ էդելվեյսներ» կենսագրավեպերը, Ալեքսանդր Թոփչյանի «Եվ անգամ մահից հետո» վեպը. վերջինն իրավացիորեն առանձնացնում է Սնակի մասին գրված երկերի շարքում՝ որպես կատարողական բարձր արժեք ունեցող: Հայցորդի՝ գնահատման չափորոշիչները միանգամայն հիմնավոր են ու գիտական, ինչը երևակվում է նաև ենթագլուխների այս բաժանմամբ:

Հայցորդը միանգամայն ճիշտ է նկատում, որ Զեյթունցյանի կենսագրավեպում Զոհրապին համակողմանի ներկայացնելու իր «նպատակին հեղինակը հասնում է հայտնի փաստերի գեղարվեստական վերացարկման և հոգեվերլուծության միջոցով»: Գովելի է նաև, որ հայցորդը չի կորցնում անաչառությունը հեղինակությունների առջև. այսպես, անդրադառնալով Զեյթունցյանի գործին՝ գրում է. «Թշնամուն [Թալեաթ, Էնվեր, Ջեմալ և այլք] ծաղրելով, լիտոտայի դիմելով գրական կերպար ստեղծելն այնքան էլ ճիշտ չէ» (էջ 59): Վստահ ենք, որ սույն աշխատանքն է՛լ ավելի կշահեր, եթե իր նկատած այդ կարևոր երանգը դիտարկվեր նաև էթնոհոգեբանության, ինչպես նաև հայ նորագույն շրջանի գրականության ներքին տրամաբանության դիրքերից ու արվեին օրինաչափությունների արձանագրումներ:

Շատ տեղին է, որ առանձին ենթավերնագրի տակ է դրված Ալեքսանդր Թամանյանին նվիրված Աղասի Այվազյանի «Պոեմ վասն շենքի և շինության» վեպի քննությունը, որն արված է գրականագիտական իմացությամբ և ճաշակով: Հայցորդին հաջողվել է թափանցել հեղինակի բուն ասելիքի խորքը, նրա ստեղծագործական մտքի լաբորատորիան:

«Հովիկ Չարխչյանի կենսագրական վեպերը («Սուլամիթա. Սնակի մեծ սերը», «Չարենցի կրակոցը»)» ենթաբաժնում քննումները ևս պատշաճ և բարեխճողորեն են կատարված: Հայցորդը գրականագիտական ապացուցումներով ցուցաբերում է գրաքննադատական մոտեցում՝ եզրակացնելով. «Չարխչյանի «Սուլամիթա. Սնակի մեծ սերը» երկը կենսագրական-արձանագրական վեպ է» (էջ 107): Չարխչյանի

երկրորդ՝ «Չարենցի կրակոցը» կենսագրավեպի մանրակրկիտ հետազոտությունից հետո ենթաբաժինն ավարտում է անվիճարկելի եզրակացությամբ. «Հովիկ Չարխչյանը գրել է երկու կենսագրավեպ, որոնք ձեռքբերումներ են արդի գրականության համապատկերում» (էջ 115):

Ատենախոսության երկրորդ գլուխն ավարտվում է 5-րդ ենթաբաժնով՝ վերնագրված «Կենսագրական վեպ արդի սփյուռքահայ գրականության մեջ. Սարգիս Վահագն, Արշիլ Կորքի»: Հայցորդը հավուր պատշաճի պատկերացնում է սփյուռքյան իրողությունների խորքերն ու այդ պաստառի վրա մանրամասն քննում սփյուռքյան այս կենսագրավեպը՝ վերջում տալով միանգամայն ճշգրիտ գնահատական՝ «գեղարվեստական ուշագրավ իրողություն»:

Ատենախոսության վերջին՝ երրորդ գլուխը միանգամայն դիպուկ է վերնագրված՝ «Պրոտագոնիստի դժվարին ճակատագիրն իբրև ստեղծագործական ազդակ»: Առաջին ենթագլուխը, որ վերաբերում է Հայկազ Հակոբջանյանի կենսագրական չորս վեպերից երկուսին (մեկը քննության էր առնվել երկրորդ գլխում՝ Ռուբեն Սևակի մասին կենսագրավեպերը քննելիս, իսկ մյուսի անդրադարձը Հայկազ Հակոբջանյանի և Աշոտ Ավետիսյանի կենսագրավեպերում Տերյանի կերպարի քննումներում է), արդարացիորեն ավելի շուտ քրաքննադատական բնույթ ունի: Հայցորդը հիմնավորում է նաև իր եզրակացությունը, թե՝ «հաջողված են առնվազն երկուսը՝ «Սպիտակ էդելվեյսները» և «Ով մարդկային արդարությունը», իսկ Տերյանի կերպարն առավել հաջողված է համարում Ավետիսյանի երկում: Հատկապես մանրակրկիտ ուսումնասիրված է Հովհաննես Մելքոնյանի վեպի ժանրային պատկանելությունը, իսկ վեպի պրոտագոնիստը դիտարկված է թե՛ պատմական, թե՛ գեղարվեստական կտրվածքում:

Հաջորդ ենթագլուխը՝ «Կերպարի գունազարդումն ու «կազմաքանդումը»» հաջող ընտրված կոնտրաստով է ներկայացված. մի կողմից՝ Վազգեն Առաքելյանի «Շիրազնամե» չափածո կենսագրական վեպի փառաբանողականությունն է, մյուսից՝

Աննա Պետրոսյանի «Սերն աշխարհեն խռովել՝ կերթա» կենսագրավեպում պրոտագոնիստի «վավերականության քայքայումը»: Հայցվորն իր այն եզրակացությունը, թե դրանք ունեն միայն ճանաչողական նշանակություն, անում է զույգ գործերի պոետիկայի հաջող քննումներով:

Աշոտ Աղաբաբյանի «Ռեզիդենտը» և «Մենակը» վեպերին, որոնք հայցվորը համարում է կենսագրական, բավականին ծավալ է հատկացված: Դրանց պոետիկային անդրադարձերն անվիճարկելի են, սակայն ցանկալի կլիներ, որ ուշադրություն դարձվեր հեղինակի կողմից նաև կոմունիստական հետախույզի յուրովի հանրահռչակման նպատակադրույթին, Սարոյանի կերպարի տակ Գուրզադյանի՝ հենց անկախ Հայաստանում հանրային դերը խորհրդային զզվոտոցի մեջ լուծելու նպատակայնությանը: Այս դեպքում միանգամայն արդարացի ենք համարում Զորի Բալայանի մոտեցումը «Մենակը» վեպին, որը բավականին հեռու է կենսագրավեպ լինելուց, թերևս միայն անփույթ օգտագործված նախատիպ ընտրելը ժանրային հեռավոր առնչություն է ապահովում:

Հասուն գրականագետի մոտեցում է ցուցաբերված ատենախոսության վերջին գլխի վերջին ենթագլխում, որը նվիրված է Բակուրի (Բորիս Կարապետյանի) «Շուշեցու հիշատակարանը» կենսագրական վեպին: Այս կենսագրավեպը միանգամայն առողջ աշխարհընկալմամբ է գրված, ուր պատգամը օտարին օտար համարելն է, ոչ թե օտարի համար հետախուզելը:

Պարզապես անթերի և սպառիչ է ատենախոսությունն ամփոփող «Եզրակացություններ» վերջաբանը:

Աշխատանքի վրա չեն կարող ստվեր գցել զուտ տեխնիկական մի քանի վրիպակներն ու մեկ-երկու ռուսաբանությունները:

Հայցորդը քաջածանոթ է թեմային վերաբերող գիտական գրականությանը, ունի զուգահեռելու, համեմատելու, ընդհանրություններ և օրինաչափություններ

վերհանելու, համակարգելու և գիտական գնահատման կարողություն: Ատենախոսությունը շահեկանորեն լրացնում է հայ գրականագիտության մեջ կենսագրական վեպի մասին առանձին ուսումնասիրություն չլինելու բացը:

Ըստ այսմ, որպես ընդդիմախոս, միջնորդում եմ ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի աստիճանաշնորհող խորհրդի առջև՝ Նարինե Հարությունի Կարախանյանին շնորհել իր հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը, ինչին միանգամայն արժանի է:

Միքայել Հրաչիկի Հայրապետյան

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

30.03.2021թ.

Ք. Երևան

Ստորագրությունը հաստատում եմ